ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/75

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

Բողոք բերող՝«Պահունի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մարտիրոսյանի

«Պահունի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Ավանեսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցում, անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Պահունի» ՍՊԸ-ի, (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 24.10.2019թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Պահունի» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ԲԷՅ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

- դադարեցնել 27.09.2019թ.-ի նիստի թիվ 11 արձանագրության 1.1 կետով կայացած որոշումը,

- ընդունել «Պահունի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 24.10.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ: 30.10.2019թ.-ին և 06.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 06.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.11.2019թ.-ին:

2. <u>«Պահունի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Պահունի» ՍՊԸ-ն 24.10.2019թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«2019 թ. հուլիսի 24-ի թիվ «2» որոշմամբ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն «ԲԷՅ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման հայտարարություն է հրապարակել:

«Պահունի» ՍՊ Ընկերությունը մասնակցել է գնանշման հարցմանը և հայտեր է ներկայացրել բոլոր 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով: «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «ԲԷՅ-ԳՀԾԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2019 թ. սեպտեմբերի 12-ի նիստի թիվ 9 Արձանագրության 1.2 կետով որոշել է 1-ին, 2-րդ և 3-րդ չաւիաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Պահունի» ՍՊ Ընկերությանը, իսկ 1.3 կետով՝ Հանձնաժողովի նիստը հետաձգել և «Պահունի» ՍՊ Ընկերությունից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (մասնագիտական փորձառություն որակավորումը հիմնավորող

փաստաթղթեր) և ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ներկայացված հիմնավորող փաստաթղթերը, հայտնաբերել է անհամապատասխանություններ, և 2019 թ. սեպտեմբերի 23-ին ծանուցել է Ընկերությանը եռօրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում Ընկերության կողմից վերացվել են թերությունները և ներկայացվել են Հանձնաժողովին: Հանձնաժողովը 2019 թ. սեպտեմբերի 27-ին ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստում (Արձանագրություն թիվ 11, 1.1 կետ) որոշում է Ընկերության հայտը բոլոր երեք չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պահունի» ՍՊ Ընկերությունը սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ Ընկերության հետ 01.12.2016 թ. կնքված պայմանագրին կից պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման ճշգրտված տարբերակը՝ համաձայն որի պայմանագիրն ավարտվել է սահմանված ժամկետում և պայմանագրի դրույթներին համապատասխան՝ սակայն վերոնշյալ պայմանագրի գումարը չի բավարարում «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությամբ սահմանված պահանջներին (բոլոր երեք չափաբաժինների մասով առանձին-առանձին ևս չի բավարարում), ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված գրությունը այն մասին, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ Ընկերության հետ 01.06.2015 թ. կնքված պայմանագիրը, որը կրում է շարունակական բնույթ, ընդունել որպես համանման, ինչը նույնպես չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ պայմանագիրը կնքվել է երեք տարուց ավելի շուտ և ամբողջ ծավալով ավարտված չէ, ուստի գնահատող հանձնաժողովը Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն որոշեց

1.1 «Պահունի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բոլոր երեք չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել:»

Ընկերությունը գտնում է, որ Հանձնաժողովի մերժումն անհիմն է:

ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերով.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի Հոդված 41. Նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանումը.

1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Գնումների մասին «ՀՀ օրենքի Հոդված 3. Օրենքի նպատակը, սկզբունքները և գործողության ոլորտը.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելոի իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ օրենքի Հոդված 6-ը Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծեռքբերում՝ համարժեք հատուցմամբ

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելոի իրավահավասարություն:

Նշված օրենքներից մեջբերումների նպատակն է սահմանել, որ կամայականորեն և անհիմն է մեկնաբանվել ՀՀ կառավարության 2017 թ մայիսի 4 ի N որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետը, այն է՝ Հանձնաժողովը 2019 թ. սեպտեմբերի 27-ին տեղի ունեցած նիստում (Արձանագրություն թիվ 11, 1.1 կետ) որոշումով սահմանել է, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ Ընկերության հետ 01.06.2015 թ. կնքված պայմանագիրը, որը կրում է շարունակական բնույթ, չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ պայմանագիրը կնքվել է երեք տարուց ավելի շուտ և ամբողջ ծավալով ավարտված չէ:

ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետը և «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետը որևէ կերպ չեն սահմանում, որ պայմանագիրը չի կարող կնքված լինել երեք տարուց շուտ և առավել ևս չի սահմանում, որ այն պետք է ամբողջ ծավալով ավարտված լինի: Կարգի և ընթացակարգի վերոնշյալ ենթակետերի պահանջն է, որպեսզի ներկայացվի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրի կողմերի հաստատած պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընկերության կողմից ներկայացված «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ Ընկերության հետ 01.06.2015 թ. կնքված պայմանագիրը հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացված պայմանագիր է: Պատշաճ ձևով իրականացված լինելու ապացույց է նաև այն հանգամանքը, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ Ընկերությունը 2015թ.-ից մինչ օրս մտադրություն չի հայտնել պայմանագիրը խզելու մասին, այլ, ընդհակառակը, շարունակում է աշխատել Ընկերության հետ:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում Ընկերության և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ Ընկերության միջև 01.06.2015 թ. կնքված պայմանագրի հետևյալ երկու կետերին.

1. Ընկերության և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ Ընկերության միջև 01.06.2015 թ. կնքված պայմանագրի 7.10 կետի երկրորդ նախադասությամբ կողմերը սահմանել են, որ «....Եթե Կողմերից ոչ մեկ գրավոր կերպով մյուս կողմին չի հայտնում 2015 թվականի դեկտեմբերի 30-ից Պայմանագիրը լուծված համարելու վերաբերյալ, ապա սույն պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարաձգված անորոշ ժամկետով»:

2. Նույն պայմանագրի 2.1 կետը սահմանում է, որ «Մատուցված ծառայության համար Տնտմարմինը վճարում է վարձ 120 000 /մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ), յուրաքանչյուր մեկ ուղեկցման դիմաց»:

Պայմանագրից մեջբերված 7.10 և 2.1 կետերը հիմք են հանդիսանում, որպեսզի Պայմանագիրը հանդիսանա սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող

փաստաթուղթ, քանի որ 7.10 կետը հիմնավորում է ժամկետի պահանջը, իսկ 2.1 կետը ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հավաստման նամակի հետ միասին՝ փաստացի կատարած ծավալների պահանջի մասով:»:

Ելնելով վերոգրյալից, «Պահունի» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

- դադարեցնել 27.09.2019թ.-ի նիստի թիվ 11 արձանագրության 1.1 կետով կայացած որոշումը,
- ընդունել «Պահունի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշում:

3. <u>«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.10.2019թ.-ի գրությամբ դիմել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Պահունի» ՍՊԸ-ի կողմից 24.10.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը 29.10.2019թ.-ի թիվ Մ-48441-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կարիքների համար 2019 թվականի հուլիսի 19-ին անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգ: Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Պահունի» ՍՊ ընկերությունը, որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացրել է 2015թ. կնքված երկու պայմանագրեր, որոնք մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ամբողջ ծավալով ավարտված չեն եղել և գտնվել են շարունակական փուլում, ուստի չէին կարող բավարարել հրավերով սահմանված պահանջին՝ մասնավորապես հրավերի 2.5 կետին՝ այն է.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում պահնորդական գործունեության իրականացնելու լիցենզիայի շրջանակներում մատուցվող ծառայության հետ կապված գործարքները:

բ. Սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենը, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի (համաձայնագրի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

Մասնակիցը ներկայացել է ևս մեկ նախկինում կատարված պայմանագիր (2016-2017թթ. ընթացքում), որը գումարային արտահայտությամբ չի ապահովում Ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ սահմանված պահանջը (բոլոր երեք չափաբաժինների մասով առանձին-առանձին ևս չի բավարարում), ուստի Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Պահունի» ՍՊԸ-ն:

Մասնակիցը հայտ է ներկայացրել 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով և նշված չափաբաժինների մասով առաջարկել է պայմանագիրը կատարել՝

- 1-ին չափաբաժնի համար՝ 3 372 000 ՀՀ դրամ գումարով,
- 2-րդ չափաբաժնի համար՝ 2 880 000 ՀՀ դրամ գումարով
- 3-րդ չափաբաժնի համար՝ 2 430 000 ՀՀ դրամ գումարով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 12.09.2019թ.-ի նիստի թիվ 9 արձանագրությամբ համաձայն՝ «Պահունի» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, և հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասի դրույթները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովի 20.09.2019թ.-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Պահունի» ՍՊԸ-ն սահմանված կարգով ներկայացրել է հրավերով պահանջված փաստաթղթերը: Որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր ներկայացվել են «Պահունի» ՍՊԸ-ի և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև 26.06.2015թ.-ին կնքված ու «Պահունի» ՍՊԸ-ի և «Զանգեզուրի պղնձամոլիբգենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջև 01.06.2015թ.-ին կնքված պայմանագրերը, որոնք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջին, ըստ որի նմանատիպ պայմանագրերը պետք է իրականացված լինեն հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում: Ներկայացվել է նաև «Պահունի» ՍՊԸ-ի և «Արմենիան քաւիրը Փրոգրամ» ՓԲԸ-ի միջև

01.12.2016թ.-ին կնքված պայմանագիրը, որին կից պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակում հստակ նշված չեն, թե արդյո՞ք պայմանագիրը կատարվել է սահմանված ժամկետներում և պայմանագրի դրույթներին համապատասխան:

Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել «Պահունի» ՍՊԸ-ին, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 27.09.2019թ.-ի նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պահունի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Արմենիան Քամփըր Փրոգրամ» ՓԲԸ-ի հետ 01.12.2016թ.-ին կնքված պայմանագրին կից պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման ճշտված տարբերակը՝ համաձայն որի պայմանագիրն ավարտվել է սահմանված ժամկետում և պայմանագրի դրույթներին համապատասխան, սակայն վերոնշյալ պայմանագրի գումարը չի բավարարում «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջներին (բոլոր երեք չափաբաժինների մասով առանձին-առանձին ևս չի բավարարում): Իսկ Մասնակցի կողմից ներկայացված գրությունը այն մասին, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ 01.06.2015թ.-ին կնքված պայմանագիրը, որը կրում է շարունակական բնույթ և այն պետք է ընդունել որպես համանման, ապա նշված պայմանագիրը նույնպես չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ պայմանագիրը կնքվել է երեք տարուց ավելի շուտ և ամբողջ ծավալով ավարտված չէ:

Նույն արձանագրությամբ՝ Հանձնաժողովը «Պահունի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բոլոր երեք չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել է:

«Պահունի» ՍՊԸ-ի կողմից 19.09.2019թ.-ին Հանձնաժողովին ներկայացված թիվ ԼՄ 071 գրությամբ տրված տեղեկանքի համաձայն՝ «Արմենիան Քամփըր Փրոգրամ» ՓԲԸ-ն իրեն պատկանող օբյեկտների պահպանման նպատակով պայմանագրային հարաբերությունների մեջ է եղել «Պահունի» ՍՊԸ-ի հետ: Պահպանության պայմանագիրը համատեղ կնքվել է 2016թ.-ի դեկտեմբերից մինչև 2017թ.-ի դեկտեմբերի վերջը՝ մեկ տարի

ժամկետով: Մասնակիցը իր պարտավորությունները կատարել է բարեխղճորեն, սահմանված ժամկետներում և պայմանագրի դրույթներին համապատասխան:

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 2.5 կետի համաձայն՝

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում պահնորդական գործունեության իրականացնելու լիցենզիայի շրջանակներում մատուցվող ծառայության հետ կապված գործարքները:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենը, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի (համաձայնագրի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդ որում գնահատող հանձնաժողովը կարող է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի (համաձայնագրի) կատարված լինելու

իսկությունը ստուգել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջոցով:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Պահունի» ՍՊԸ-ի կողմից 24.10.2019թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված

պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ,

ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը

հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի

գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնի հայտարարություն այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր, պայմանով, որ գնահատող հանձնաժողովը կարող է սույն կետի 2-րդ ենթակետի հիման վրա ներկայացված պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) կատարված լինելու իսկությունը ստուգել կոմիտեի միջոցով: Նախկինում կատարված պայմանագիրը (պայմանագրերը) գնահատվում է (գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ յոթանասուն տոկոսից: Ընդ որում, առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան, իսկ ճանապարհաշինարարական աշխատանքների դեպքում՝ երեսունհինգ տոկոսից.

Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում պահնորդական գործունեության իրականացնելու լիցենզիայի շրջանակներում մատուցվող ծառայության հետ կապված գործարքները:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենը, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի (համաձայնագրի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդ որում գնահատող հանձնաժողովը կարող է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի (համաձայնագրի) կատարված լինելու իսկությունը ստուգել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջոցով:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը

գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,
2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,
3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից անվտանգության և պահնորդային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Պահունի» ՍՊԸ-ն, որը նշված չափաբաժինների մասով առաջարկել է պայմանագիրը կատարել՝

- 1-ին չափաբաժնի համար՝ 3 372 000 ՀՀ դրամ գումարով,
- 2-րդ չափաբաժնի համար՝ 2 880 000 ՀՀ դրամ գումարով
- 3-րդ չափաբաժնի համար՝ 2 430 000 ՀՀ դրամ գումարով:

Հանձնաժողովի 12.09.2019թ.-ի նիստի թիվ 9 արձանագրության համաձայն՝ «Պահունի» ՍՊԸ-ն 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Նույն արձանագրությամբ, Հանձնաժողովն առաջարկել է Մասնակցին ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Հհանձնաժողովի 20.09.2019թ.-ի նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Պահունի» ՍՊԸ-ն սահմանված կարգով ներկայացրել է հրավերով պահանջված փաստաթղթերը: Որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագրեր ներկայացվել են «Պահունի» ՍՊԸ-ի և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև 26.06.2015թ.-ին կնքված ու «Պահունի» ՍՊԸ-ի և «Զանգեզուրի պղնձամոլիբգենային կոմբինատ» ՓԲԸ-ի միջև 01.06.2015թ.-ին կնքված պայմանագրերը, որոնք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջին, ըստ որի նմանատիպ պայմանագրերը պետք է իրականացված լինեն հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում: Ներկայացվել է նաև «Պահունի» ՍՊԸ-ի և «Արմենիան քաւիըր Փրոգրամ» ՓԲԸ-ի միջև 01.12.2016թ.-ին կնքված պայմանագիրը, որին կից պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակում հստակ նշված չեն, թե արդյո՞ք պայմանագիրը կատարվել է սահմանված ժամկետներում և պայմանագրի դրույթներին համապատասխան, ինչով պայմանավորված որոշվել է կասեցնել նիստը և ծանուցել «Պահունի» ՍՊԸ-ին, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 27.09.2019թ.-ի նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պահունի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «Արմենիան Քամփըր Փրոգրամ» ՓԲԸ-ի հետ 01.12.2016թ.-ին կնքված պայմանագրին կից պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման ճշգրտված տարբերակը՝ համաձայն որի պայմանագիրն ավարտվել է սահմանված ժամկետում և պայմանագրի դրույթներին համապատասխան, սակայն վերոնշյալ պայմանագրի գումարը չի բավարարում «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջներին (բոլոր երեք չաւիաբաժինների մասով առանձին-առանձին ևս չի բավարարում): Իսկ Մասնակցի կողմից ներկայացված գրությունը այն մասին, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հետ 01.06.2015թ.-ին կնքված

պայմանագիրը, որը կրում է շարունակական բնույթ և այն պետք է ընդունել որպես համանման, ապա նշված պայմանագիրը նույնպես չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ պայմանագիրը կնքվել է երեք տարուց ավելի շուտ և ամբողջ ծավալով ավարտված չէ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը «Պահունի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բոլոր երեք չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել է:

«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 2.5 կետի համաձայն՝«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում պահնորդական գործունեության իրականացնելու լիցենզիայի շրջանակներում մատուցվող ծառայության հետ կապված գործարքները:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկով, որպես պայմանագրի կատարման համար նախատեսված ընդհանուր գումար 1-ին չափաբաժնի համար նշվել է 3 372 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի համար՝ 2 880 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի համար՝ 2 430 000 ՀՀ դրամ (ամենաբարձր գնային առաջարկի հիսուն տոկոսը կազմում է 1 686 000 ՀՀ դրամ, իսկ քսան տոկոսը՝ 674 400 ՀՀ դրամ):

Մասնակցի կողմից Հանձնաժողովին ներկայցված 01.12.2016թ.-ի դեկտեմբերի 1-ին կնքված «օբյեկտի պահպանության իրականացման մասին» պայմանագրի համաձայն՝ մատուցված ծառայությունների համար «Պահունի» ՍՊԸ-ին վճարվել է վարձ յուրաքանչյուր ամսվա համար 1 091 000 (մեկ միլիոն իննսունմեկ հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

«Արմենիան Քամփըր Փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից 19.09.2019թ.-ին տրված տեղեկանքի համաձայն՝ կողմերի միջև պայմանագիրը կնքվել է 2016թ.-ի դեկտեմբերից մինչև 2017թ.-ի դեկտեմբերի վերջը՝ մեկ տարի ժամկետով: Մասնակիցն իր պարտավորությունները կատարել է բարեխղճորեն, սահմանված ժամկետներում և պայմանագրի դրույթներին համապատասխան:

Այսպիսով, «Պահունի» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում ներկայացնելով իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթեր՝ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող ապացույցներ, բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջներին, քանի որ Մասնակցի կողմից ներկայացված՝ «Արմենիան Քամփըր Փրոգրամ» ՓԲԸ-ի հետ 2016թ.-ի դեկտեմբերի 1-ից մինչև 2017թ.-ի դեկտեմբերի վերջը կնքված պայմանագրի հանրագումարն ամբողջությամբ ապահովում է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած ամենաբարձր գնային առաջարկի հիսուն տոկոսը, այն է՝ 1 686 000 ՀՀ դրամ գումարը, այն փաստական հանգամանքով պայմանավորված, որ «Պահունի» ՍՊԸ-ին յուրաքանչյուր ամսվա համար վճարված գումարը 1 091 000 ՀՀ դրամը մեկ տարվա համար կազմում է 13 092 000 ՀՀ դրամ, իսկ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ուստի, տվյալ պարագայում, գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Պահունի» ՍՊԸ-ի կողմից 24.10.2019թ.-ի ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/75 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 27.09.2019թ.-ի նիստի թիվ 11 արձանագրության 1.1 կետով կայացած որոշումը,

- ընդունել «Պահունի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**